**Արձանագրություն N 4**

***Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«27» «Մարտի» 2026թ.
ժամը 17:30

| | |
|---|---|
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Բաբայան |
| Հանձնաժողովի անդամներ | Վ.Վահանյան, Ա.Գևորգյան, Հ.Խուրշուդյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Ընդունել ի գիտություն, որ 09.03.26թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի մարտի 20-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2026 թվականի մարտի 23-ին ժամը 12:00-ին: 2026 թվականի մարտի 24-ին ժամը 12:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Էրմեդ» ՍՊԸ | adamyanerem@yahoo.com | 04721572 |
| 2 | «Մեդէքսպերտ» ՍՊԸ | medexspertarmenia@gmail.com | 04229065 |
| 3 | «Էյէյ Ինժենիրինգ» ՍՊԸ | aaengineeringllc@gmail.com | 01326546 |
| 4 | «Յունիմեդ» ՍՊԸ | Unimed7@yandex.ru | 01806887 |
| 5 | «Իվաֆարմ» ՍՊԸ | lvapharm89@gmail.com | 08625799 |
| 6 | «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ | armedtechnicallc@gmail.com | 02604367 |
| 7 | «Վի Ար Մեդիքալ» ՍՊԸ | vrmedicalarm@gmail.com | 00214227 |
| 8 | «Արուշին 91 Գրուպ» ՍՊԸ | vidtardan@gmail.com | 01091058 |
| 9 | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ | lawyer@c-e.am | 01210095 |
| 10 | «Էքստրա Մոթորս» ՍՊԸ | Exstra.mot2024@gmail.com | 01336677 |
| 11 | «Անիմեդ» ՍՊԸ | animedllc@mail.ru | 09221601 |
| 12 | «Օֆելյա Ղարաքեշիշյան» ԱՁ | oful@inbox.ru | 26765946 |
| 13 | «ՓԻԷՖ Գրուպ» ՍՊԸ | Mels.baghdasaryan@gmail.com | 02548673 |
| 14 | «Փոլարիս» ՍՊԸ | Gnumner.polarisllc@gmail.com | 08271777 |
| 15 | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | pprimalab@gmail.com | 08256775 |
| 16 | «Մեդթրեյդ» ՍՊԸ | info@medtrade.am | 00220168 |
| 17 | «Խաչպար» ՍՊԸ | Khachpar.llc@gmail.com | 00071045 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Ա. Բաբայան)***

«Արսշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր հրավերով սահմանված պահանջներով ՀՀ ռեզիդենտ մասնակցի կողմից ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն հավելված՝ 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով: Մնացած բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան և արձանագրված անճշտությունները ենթակա են շտկման: «Երմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան և գնահատվել է բավարար: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 24.03.2026թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

**«Յունիմեդ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժինների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

**«ՎԻ ԱՌ ՄԵԴԻՔԱԼ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 4-րդ և 9-րդ չափաբաժինների համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժինների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

**«ԱՐՍԶԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մասնավորապես հրավերի պահանջով ներկայացված Հավելված 1-ը ստորագրված չէ՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում-հայտարարությունը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Հայտում ներառվող փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում չեն կնքվում, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներով մասնակիցը պետք է ներկայացնի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված՝ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան) ՀՀ ռեզիդենտը, ինչը ներկայացված չի, անհրաժեշտ է ներկայացնել: Անհրաժեշտ է շտկել նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժինների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

**«ԷյԷյ Ինժենիրինգ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի

անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 8-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժնի համար ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

**«Իվաֆարմ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 1-ին և 10-րդ չափաբաժինների համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժինների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

**«ՄԵԴԹՐԵՅԴ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 11-րդ և 13-րդ չափաբաժինների համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժինների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի

արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

26.03.2026թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին մասնակիցների կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ բոլոր ծանուցված մասնակիցների կողմից ներկայացված շտկումները կատարված են, և բացի «Արշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

**Որոշվեց.** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները շտկումներ ներկայացրած «Յունիմեդ» ՍՊԸ, «Վի ԱՌ ՄԵԴԻՔԱԼ» ՍՊԸ, «Էյէյ Ինժեներինգ» ՍՊԸ, «Իվաֆարմ» ՍՊԸ և «ՄԵԴԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար: «Արշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի շտկված փաստաթղթերը գնահատելիս գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ վերջինս պահանջվող շտկումները կատարել է մասնակի, ոչ լիարժեք, մասնավորապես շտկվել և ստորագրված ներկայացվել է Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը, ներկայացվել է շտկված Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Սակայն 5-րդ և 6-րդ չափաբաժինների ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) շտկված են մասնակի, ներկայացվել են ֆրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները տեխնիկական բնութագրերի հստակ տեխնիկական չափանիշների շտկում չի իրականացվել, այն դեպքում, երբ գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվել էր շտկել և հստակ ներկայացնել ապրանքների տեխնիկական չափանիշները, սակայն նշված չափաբաժինների համար հստակ նկարագրությունների փոխարեն, պատճենված են հրավերի բնութագրերը, առանց հստակեցնելու առաջարկվող չափորոշիչները, երաշխիքային ժամկետներն ու որակի վկայականները, չեն շտկվել «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Ուստի «Արշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման և հիմք ընդունելով 04.05.2017թ. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 19-րդ մասը՝ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, «Արշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի կատարված մասնակի շտկումը համարել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

***(Ա. Բաբայան)***

23.03.2026թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին*

---

***(Ա. Բաբայան)***

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան տրամադրվել են հետևյալ պարզաբանումները.

**Հարցում 1-ին՝ ներկայացվել է 11.03.2026թ. ժամը 16:07**

«Հարգելի Պատվիրատու, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի մատակարարման ժամանակացույցում սահմանված է հետևյալ պայմանը՝ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.05.20226 թ.»: Հավանաբար տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, և 2026 թ.-ի փոխարեն նշվել է 20226 թ.: Խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխություն հրավերում: Միաժամանակ, հիմնվելով պահանջվող տեխնիկական բնութագրերի և սահմանված նախահաշվային գների վրա՝ կարելի է եզրակացնել, որ ընդունելի են նաև չինական արտադրության ապրանքներ: Սակայն մատակարարման համար սահմանված 45 օրացույցային օրվա ժամկետը գործնականում բավարար չէ նման ապրանքների մատակարարումն իրականացնելու համար: Մասնավորապես, արտադրության միջին ժամկետը կազմում է մոտ 30 օր, իսկ ծովային փոխադրումը՝ մոտավորապես 60–90 օր: Օդային փոխադրումը ևս գործնականում դժվար իրագործելի է՝ հաշվի առնելով սահմանված ցածր նախահաշվային գները, ինչպես նաև այն հանգամանքը, որ որոշ ապրանքներ կարող են պարունակել մարտկոցներ, ինչի պատճառով օդային բեռնափոխադրումը կարող է սահմանափակված կամ արգելված լինել: Վերոգրյալից ելնելով՝ խնդրում ենք հնարավորության դեպքում երկարաձգել մատակարարման ժամկետը մինչև 120 օրացույցային օր և հրավերում կատարել համապատասխան փոփոխություն:»:

**Պարզաբանում 1՝ տրամադրվել է 13.03.2026թ.**

«Հարգելի գործընկեր մատակարարման ժամկետի սահման մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ «10.05.20226»-ի փոխարեն պետք է ընդունել «10.05.2026»: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի «ը» ենթակետով որպես ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման նվազագույն ժամկետ, իսկ փուլային ձևով

պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի նվազագույն ժամկետ սահմանված է 20 օրացուցային օր, հետևաբար «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում..» մատակարարման ժամկետի սահմանումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին:»:

**Հարցում 2-րդ՝ ներկայացվել է 12.03.2026թ. ժամը 20:33**

«Բարև Ձեզ, խնդրում եմ պարզաբանել արդյոք տվյալ մրցույթի 2-րդ չափաբաժնի տեխ. բնութագրում նշված հետևյալ պահանջի, Ձայնագրող թուղթ՝ ոչ պակաս քան 800մմ x 30մ, փոխարեն ընդունելի կարող է լինել Z folded թուղթ:»:

**Պարզաբանում 2՝ տրամադրվել է 13.03.2026թ.**

«Հարգելի գործընկեր Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգ»-ի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը»:»

**Հարցում 3-րդ՝ ներկայացվել է 13.03.2026թ., ժամը 13:02**

«Բարի օր, Խնդրում ենք տրամադրել պարզաբանում ստորև հարցերի մասով: ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27 հրավերի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով նշված՝ 1. «ԷՍԳ չափումներ՝ բոլոր արտածումները, միջին, ճշգրտված HR- ի միջին RR PR- ի միջակայքում ......»: - խնդրում եմ պարզաբանել «ճշգրտված HR- ի միջին RR PR- ի միջակայքում», արդյո՞ք նկատի ունեք HR և RR չափումներ PR Միջակայքում: 2. Ձայնագրիչ. «INOP-ի կառավարումն անկախ յուրաքանչյուր էլեկտրոդի և պեյսմեյկերի հայտնաբերման համար» - արդյո՞ք նկատի ունեք յուրաքնչյուր էլեկտրոդի կամ կաբելի թեր միացման/անջատման դեպքում զգուշացում (Lead missed, Lead off Alarm) 3. Տեխնիկական բնութագրով սահմանված Փաթույթ/Rolled թղթի փոխարեն, եթե առաջարկենք Z-Fold paper 210mm×140mm×20m չափերով, արդյո՞ք կդիտարկվի բավարար:»:

**Պարզաբանում 3՝ տրամադրվել է 16.03.2026թ.**

«Հարգելի գործընկեր: 1. PR Միջակայքում HR և RR չափումների իրականացումը անհնար է: Պահանջվող նվազագույն չափումներն են՝ «բոլոր արտածումները», «միջին ճշգրտված HR», «միջին RR միջակայք», «միջին PR միջակայք», «QRS տևողություն», «QT միջակայք և QTc միջակայք», «առավելագույն R [V5] կամ [V6] և S [V1]», «Սոկոլով-Լիոն ինդեքս», «P, R, T առանցքներ»: 2. «INOP-ի կառավարումն անկախ յուրաքանչյուր էլեկտրոդի և պեյսմեյկերի հայտնաբերման համար» պահանջը նշանակում է, որ սարքավորումը բացի յուրաքնչյուր էլեկտրոդի կամ լարի թերի միացման/անջատման դեպքում զգուշացնում է (Lead missed, Lead off Alarm) առկա խնդրի մասին այլ նաև նշում թե կոնկրետ որ էլեկտրոդին կամ լարին է վերաբերվում այդ զգուշացումը: 3. Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգ»-ի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ

ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ իրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:»

**Հարցում 4-րդ՝ ներկայացվել է 13.03.2026թ., ժամը 21:17**

«Հարգելի գործընկեր, խնդրում ենք պարզաբանում տալ հետևյալ հարցմանը. «Համաձայն ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորի (AED) տեխնիկական բնութագրերի՝ սահմանված է պահանջ սնուցման աղբյուրի՝ վերալիցքավորվող մարտկոցի պարտադիր առկայության վերաբերյալ: Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորը հանդիսանում է անհետաձգելի բժշկական օգնության սարքավորում, որը նախատեսված է արտակարգ իրավիճակներում կիրառման համար և պետք է մշտապես գտնվի օգտագործման պատրաստ վիճակում, քանի որ սրտաթոքային վերակենդանացման ընթացքում յուրաքանչյուր վայրկյանը կարող է ունենալ որոշիչ նշանակություն: Դեֆիբրիլյացիայի արդյունավետությունն առավել բարձր է փորոքային ֆիբրիլյացիայի կամ փորոքային տախիկարդիայի առաջացման առաջին րոպեներին: Նշենք նաև, որ դեֆիբրիլյատորում տեղադրված մարտկոցը ապահովում է ոչ միայն դեֆիբրիլյացիոն լիցքի մատակարարումը, այլև սարքի ինքնաստուգման համակարգի աշխատանքը, որի միջոցով իրականացվում է սարքի, էլեկտրոդների և սնուցման աղբյուրի տեխնիկական վիճակի պարբերական ավտոմատ վերահսկում: Այդ պատճառով միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում են երկարատև պահպանման լիթիումային ոչ վերալիցքավորվող մարտկոցներ, որոնք նախատեսված են բազմամյա սպասման ռեժիմի համար և չեն պահանջում պարբերական լիցքավորում: Միևնույն ժամանակ վերալիցքավորվող մարտկոցի կիրառումը ենթադրում է դրա լիցքավորման մակարդակի պարբերական վերահսկում և որոշակի ժամանակահատվածներով մարտկոցի դուրսբերում՝ վերալիցքավորման նպատակով, ինչի ընթացքում սարքը փաստացի դուրս է գալիս շահագործումից և չի կարող օգտագործվել անհետաձգելի բժշկական օգնության տրամադրման համար: Վերոնշյալը հաշվի առնելով՝ միայն վերալիցքավորվող մարտկոցի պարտադիր պահանջի սահմանումը կարող է հանգեցնել մրցակցության անհարկի սահմանափակման և նվազեցնել հավասար մասնակցության հնարավորությունները այն արտադրողների համար, որոնց արտադրանքում կիրառվում են միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված երկարատև պահպանման ոչ վերալիցքավորվող մարտկոցներ: Միաժամանակ նման սահմանափակումը չի բխում սարքավորման ֆունկցիոնալ նշանակությունից և չի հանդիսանում բժշկական կամ տեխնիկական տեսանկյունից անհրաժեշտ պայման սարքավորման արդյունավետ և անվտանգ շահագործման համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք քննարկել տեխնիկական բնութագրերում համապատասխան փոփոխություն կատարելու հնարավորությունը և սնուցման աղբյուրի վերաբերյալ պահանջը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դեֆիբրիլյատորի աշխատանքի համար նախատեսված մարտկոցի առկայություն. թույլատրվում է ինչպես վերալիցքավորվող, այնպես էլ ոչ վերալիցքավորվող մարտկոցի կիրառումը՝ առնվազն 4 տարվա ծառայության ժամկետով սպասման ռեժիմում»: Նշված փոփոխության իրականացումը հնարավորություն կտա ապահովել մրցակցային և ոչ խտրական պայմաններ՝ միաժամանակ պահպանելով սարքավորման կլինիկական արդյունավետության, անվտանգության և հուսալիության պահանջները»:

**Պարզաբանում 4՝ տրամադրվել է 16.03.2026թ.**

«Հարգելի գործընկեր: Տեղեկացնում ենք, որ «Ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորի (AED)» սարքավորում արտադրող ընկերությունների մեծամասնությունը արտադրում է նշված սարքավորման թե «երկարատև պահպանման չլիցքավորվող մարտկոցներով» և թե «վերալիցքավորվող մարտկոցներով» մոդելներ, հետևաբար վերալիցքավորվող մարտկոցի պարտադիր առկայության պայմանը մրցակցային է և ոչ խտրական: «Երկարատև պահպանման չլիցքավորվող մարտկոցների» 4 տարվա ծառայության ժամկետը սահմանվում է միայն «սպասման ռեժիմի» համար, իսկ սարքավորման կիրառման յուրաքանչյուր դեպք զգալիորեն կրճատում է այդ ժամկետը և այդ մարտկոցներով սարքավորումների համար սահմանված է կիրառման որոշակի քանակ՝ որից հետո մարտկոցը անհրաժեշտ է փոխարինել: Մինչդեռ վերալիցքավորվող մարտկոցների պարբերաբար լիցքավորման արդյունքում սարքավորման կիրառման դեպքերը չեն սահմանափակվում:»:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Ա. Բաբայան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն և 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշումների պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Յունիմեդ» ՍՊԸ-ն՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ 16,825,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Էյէյ Ինժեներինգ» ՍՊԸ-ն՝ 8-րդ չափաբաժնի մասով՝ 8,700,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Վի Առ Մեդիքալ» ՍՊԸ-ն՝ 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ 4,070,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Երմեդ» ՍՊԸ-ն՝ 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով՝ 8,419,999 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Մեդթրեյդ» ՍՊԸ-ն՝ 11-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ 10,320,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Իվաֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով՝ 22,800,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Մերժել բոլոր այն մասնակիցների հայտերը որոնց ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գները՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի:

**Որոշվեց.** Մերժել «Արսշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի հայտը և «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 28.03.2026թ.-ից մինչև 06.04.2026թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Ա. Բաբայան

Անդամներ՝ ______________ Վ. Վահանյան

---------------------- Ա. Գևորգյան

______________ Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 23.03.2026թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Յունիմեդ» ՍՊԸ | | | | | «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Սառնարան դեղորայքի պահպանման համար/ արդյունաբերական սառնարաններ | 39711160/501 | 28 | 750,000.00 | 21,000,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | 12,600,000.00 | 2,520,000.00 | 15,120,000.00 | 450,000.00 | 540,000.00 |
| 2 | ԷՍԳ շարժական/ էլեկտրասրտագրիչ | 33121150/501 | 27 | 510,000.00 | 13,770,000.00 | 5,805,000.00 | 0.00 | 5,805,000.00 | 215,000.00 | 215,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3 | AED դեֆիբրիլյատոր/ դեֆիբրիլյատոր | 33181190/501 | 29 | 600,000.00 | 17,400,000.00 | 11,020,000.00 | 0.00 | 11,020,000.00 | 380,000.00 | 380,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 4 | Կշեռք մեծահասակի հասակաչափով/ կշեռքներ | 42921180/501 | 29 | 80,000.00 | 2,320,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 5 | Կշեռք մանկական հասակաչափով/ կշեռքներ | 42921180/502 | 45 | 130,000.00 | 5,850,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 6 | Օդի ռեցիրկուլյատոր/ մանրեազերծող սարք | 33191100/501 | 87 | 65,000.00 | 5,655,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 7 | Վիրակապական գործիքների հավաքածու/ վիրաբուժական գործիքներ | 33141224/501 | 29 | 300,000.00 | 8,700,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 8 | Պատվաստանյութերի սառնարան/ սառնարան-սառցարաններ | 39711110/501 | 16 | 1,500,000.00 | 24,000,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | 16,000,000.00 | 3,200,000.00 | 19,200,000.00 | 1,000,000.00 | 1,200,000.00 |
| 9 | Հետազոտման լամպ/ վիրաբուժական լույսեր | 33161180/501 | 29 | 110,000.00 | 3,190,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 10 | Ցենտրիֆուգ/ լաբորատորիական ցենտրիֆուգներ – սարքավորումներ | 42931100/501 | 29 | 385,000.00 | 11,165,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 11 | Բժշկական թթվածնի կոնցենտրատոր/ թթվածնային թերապիայի – | 33151200/501 | 29 | 600,000.00 | 17,400,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 12 | ԱՍԲԻՆ հավաքածու/ բժշկական այլ գործիքներ – սարքավորումներ | 33141223/501 | 29 | 170,000.00 | 4,930,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Յունիմեդ» ՍՊԸ | | | | | «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 13 | Սեղանի ջրի թորիչ/ ջրի մաքրման սարքավորումներ | 42911160/501 | 29 | 150,000.00 | 4,350,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |

Սարքային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 23.03.2026թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «ԷյԷյ Ինժենիրինգ» ՍՊԸ | | | | | «Վի Աէ Մեդիքալ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Սառնարան դեղորայքի պահպանման համար/ արդյունաբերական սառնարաններ | 39711160/501 | 28 | 750,000.00 | 21,000,000.00 | 14,275,000.00 | 0.00 | 14,275,000.00 | 509,821.43 | 509,821.43 | 14,450,000.00 | 0.00 | 14,450,000.00 | 516,071.43 | 516,071.43 |
| 2 | ԷՍԳ շարժական/ էլեկտրասրտագրիչ | 33121150/501 | 27 | 510,000.00 | 13,770,000.00 | 9,200,000.00 | 0.00 | 9,200,000.00 | 340,740.74 | 340,740.74 | 13,769,999.00 | 0.00 | 13,769,999.00 | 509,999.96 | 509,999.96 |
| 3 | AED դեֆիբրիլյատոր/ դեֆիբրիլյատոր | 33181190/501 | 29 | 600,000.00 | 17,400,000.00 | 18,000,000.00 | 0.00 | 18,000,000.00 | 620,689.66 | 620,689.66 | 13,000,000.00 | 0.00 | 13,000,000.00 | 448,275.86 | 448,275.86 |
| 4 | Կշեռք մեծահասակի հասակաչափով/ կշեռքներ | 42921180/501 | 29 | 80,000.00 | 2,320,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | 1,690,000.00 | 0.00 | 1,690,000.00 | 58,275.86 | 58,275.86 |
| 5 | Կշեռք մանկական հասակաչափով/ կշեռքներ | 42921180/502 | 45 | 130,000.00 | 5,850,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | 4,100,000.00 | 0.00 | 4,100,000.00 | 91,111.11 | 91,111.11 |
| 6 | Օդի ռեցիրկուլյատոր/ մանրէազերծող սարք | 33191100/501 | 87 | 65,000.00 | 5,655,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 7 | Վիրակապական գործիքների հավաքածու/ վիրաբուժական գործիքներ | 33141224/501 | 29 | 300,000.00 | 8,700,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
